ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 195
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքը (Խնձորեսկ գյուղը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Գորիս համայնքի (Խնձորեսկ գյուղի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքը (Խնձորեսկ գյուղը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Սյունիք-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի (Խնձորեսկ գյուղ) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
09-045-0132-0167 կադաստրային ծածկագրով 0.6 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր	09-045-0132-0167 կադաստրային ծածկագրով 0.6 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, որից 0.49034 հա մակերեսը՝ բնակելի կառուցապատման, իսկ 0.10966 հա մակերեսը՝ ընդհանուր օգտագործման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Գորիս համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Խնձորեսկ գյուղի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի (Խնձորեսկ գյուղի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	
	Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝	
	Լ.Առաքելյան

Երևան, «17» «հունիսի» 2025 թ.